

AltaMed

ՈՐԱԿՅԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ՝ ԱՌԱՆՑ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ™

ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն ամփոփագիրը բացատրում է ձեր իրավունքները և մեր՝ ձեզ օգնելու պարտականություններից որոշները:

ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Երբ խոսքը վերաբերում է ձեր առողջական վիճակի վերաբերյալ տեղեկություններին, դուք որոշակի իրավունքներ ունեք:

Ստացեք ձեր բժշկական փաստաթղթերի էլեկտրոնային թղթային պատճենը

- Դուք կարող եք խնդրել՝ տեսնելու կամ ստանալու ձեր բժշկական փաստաթղթերի էլեկտրոնային կամ թղթային պատճենը կամ ձեր մասին մեր ունեցած այլ բժշկական տեղեկությունները: Հարցրեք մեզ, թե ինչպես դա անել:
- Սովորաբար, ձեր հարցումից հետո 15 օրվա ընթացքում մենք կտրամադրենք ձեր առողջապահական տվյալների կամ ամփոփագրի պատճենը: Մենք կարող ենք ողջամիտ, ծախսերի վրա հիմնված վճար գանձել:

Խնդրեք մեզ ուղղել ձեր բժշկական փաստաթղթերը

- Դուք կարող եք խնդրել մեզ ուղղել ձեր առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունները, որոնք, ըստ ձեզ, սխալ կամ թերի են: Հարցրեք մեզ, թե ինչպես դա անել:
- Մենք կարող ենք “այո” ասել բոլոր ողջամիտ հայցերին:

Գաղտնի հաղորդակցություն խնդրեք

- Դուք կարող եք խնդրել մեզ՝ ձեզ հետ որոշակի եղանակով կապվել (օրինակ՝ տան կամ գրասենյակի հեռախոսահամարով) կամ նամակ ուղարկել մեկ այլ հասցեով:
- Մենք կարող ենք “այո” ասել բոլոր ողջամիտ հայցերին:

Խնդրեք մեզ սահմանափակել այն, ինչ մենք օգտագործում կամ փոխանցում ենք

- Դուք կարող եք խնդրել մեզ չօգտագործել կամ չհամօգտագործել որոշ բժշկական տվյալներ՝ բուժման, վճարման կամ մեր գործառնությունների համար:
- Մեզանից չի պահանջվում համաձայնել ձեր խնդրանքին, և մենք կարող ենք ասել “ոչ”, եթե դա կազդի ձեր սպասարկման վրա:
- Եթե դուք որևէ ծառայության կամ բուժապասարկման որևէ պարագայի համար ինքներդ ամբողջությամբ վճարում եք, կարող եք մեզ խնդրել վճարման կամ մեր գործունեության նպատակով այդ տեղեկությունները չփոխանցել ձեր բժշկական ապահովագրության ընկերությանը:

- Մենք կասենք “այո”, եթե օրենքը մեզանից չի պահանջում փոխանցել այդ տեղեկությունները:

Ստացեք այն կողմերի ցանկը, ում մենք փոխանցել ենք այդ տեղեկությունները

- Դուք կարող եք պահանջել այն ցանկը (հաշվապահական), որտեղ ներառված են այն ժամանակահատվածները, երբ մենք ձեր առողջապահական տվյալները ձեր հարցման օրվանից վեց տարի առաջ համօգտագործել ենք, ում հետ և ինչու:

Ստացեք այս՝ գաղտնիության վերաբերյալ ծանուցման պատճենը

- Դուք կարող եք ցանկացած ժամանակ պահանջել այս ծանուցման թղթային պատճենը, նույնիսկ եթե համաձայնել եք ծանուցումն ստանալ էլեկտրոնային տարբերակով: Մենք ձեզ անհապաղ կտրամադրենք թղթային պատճենը:

Ընտրեք որևէ անձ, ով կգործի ձեր փոխարեն

- Եթե որևէ մեկին բժշկական լիազորագիր եք տվել կամ եթե ինչ-որ մեկը ձեր օրինական խնամակալն է, ապա այդ անձը կարող է օգտվել ձեր իրավունքներից և որոշումներ կայացնել ձեր բժշկական տվյալների վերաբերյալ:
- Նախքան որևէ գործողություն ձեռնարկելը՝ մենք կհամոզվենք, որ տվյալ անձն ունի այս լիազորությունը և կարող է հանդես գալ ձեր փոխարեն:

Բողոք ներկայացրեք, եթե կարծում եք, որ ձեր իրավունքները ոտնահարվել են

- Եթե կարծում եք, որ մենք խախտել ենք ձեր իրավունքները, կարող եք բողոքել՝ դիմելով մեզ և օգտագործելով ստորև ներկայացված Գաղտնիության համար պատասխանատու աշխատակցի կոնտակտային տվյալները:

AltaMed Health Services Corporation
Attention: Privacy Officer
2040 Camfield Avenue
Los Angeles, CA 90040
(888) 499-9303
altamedprivacyoffice@altamed.org

- Դուք կարող եք նաև բողոք ներկայացնել ԱՄՆ Առողջապահության և հանրային ծառայությունների վարչության Քաղաքացիական իրավունքների գրասենյակին՝ այցելելով www.hhs.gov/ocr/privacy/hipaa/complaints/

Մենք ձեզանից վրեժխնդիր չենք լինի բողոք ներկայացնելու համար:

Բժշկական որոշակի տվյալների համար կարող եք AltaMed-ին հայտնել ձեր նախընտրություններն այն մասին, ինչը մենք համոզագործում ենք: Եթե հստակ նախընտրություն ունեք այն մասին, թե ինչպես ենք մենք համոզագործում ձեր տվյալները ստորև նկարագրված իրավիճակներում, դիմեք մեզ: Տեղեկացրեք մեզ, թե ինչ եք ցանկանում, որ մենք անենք, և մենք կհետևենք ձեր հրահանգներին:

Հետևյալ դեպքերում դուք մեզ հայտնելու և՛ իրավունք, և՛ ընտրություն ունեք.

Տեղեկությունները փոխանցել ձեր ընտանիքի անդամներին, մոտ ընկերներին կամ ձեր սպասարկման մեջ ներգրավված այլ անձանց:

Մարքեթինգային նպատակներով.

Մարքեթինգային նպատակներով ձեր Պաշտպանվող առողջապահական տեղեկությունների (Protected Health Information, PHI) հիմնական օգտագործման և համոզագործման համար կպահանջվի ձեր նախնական գրավոր լիազորությունը՝ մի քանի բացառություններով, ինչպիսիք են առողջության հետ կապված արտադրանքի, ծառայությունների կամ մատակարարների թարմացումների մարքեթինգը:

Դրամահավաքի դեպքում.

Մենք կարող ենք կապվել ձեզ հետ, որպեսզի տեղեկություններ տրամադրենք AltaMed-ի կողմից հովանավորված միջոցառումների, այդ թվում՝ դրամահավաք ծրագրերի և միջոցառումների մասին: Դուք կարող եք ցանկացած ժամանակ հրաժարվել դրամահավաքի վերաբերյալ հաղորդագրություններ ստանալուց՝ կապ հաստատելով Հիվանդների սպասարկման մեր կենտրոնի հետ (888) 499-9303 համարով կամ արձագանքելով ցանկացած հաղորդագրությանը՝ դուրս գալու խնդրանքով: Ձեր որոշումը ոչ մի ազդեցություն չի ունենա ձեր բուժման կամ ծառայությունների դիմաց վճարման վրա:

AltaMed-ը սովորաբար կարող է օգտագործել կամ համոզագործել ձեր առողջապահական տվյալները հետևյալ եղանակներով:

Ձեզ բուժելու նպատակով

Մենք կարող ենք օգտագործել ձեր բժշկական տվյալները և դրանք փոխանցել ձեզ բուժող այլ մասնագետներին:

Մեր կազմակերպության գործունեությունն իրականացնելու նպատակով

Մենք կարող ենք օգտագործել և համոզագործել ձեր բժշկական տվյալները՝ մեր աշխատանքը կատարելու, ձեր

սպասարկումը բարելավելու և անհրաժեշտության դեպքում ձեզ հետ կապ հաստատելու համար:

Ձեզ մատուցված ծառայությունների դիմաց հաշիվ ներկայացնելու նպատակով

Մենք կարող ենք օգտագործել և համոզագործել ձեր բժշկական տվյալները՝ բժշկական ապահովագրության պլաններին կամ այլ կազմակերպություններին հաշիվներ ներկայացնելու և վճարումներ ստանալու համար:

Հանրային առողջապահության և անվտանգության հարցերում օգնելու նպատակով

Մենք կարող ենք օգտագործել և համոզագործել ձեր բժշկական տվյալները՝ հիվանդությունների կանխարգելման, ենթադրյալ չարաշահման, անտեսման կամ ընտանեկան բռնության մասին հաղորդման, որևէ մեկի առողջությանը կամ անվտանգությանը սպառնացող լուրջ վտանգը կանխելու կամ նվազեցնելու նպատակով:

Հետազոտություն կատարելու նպատակով

- Մենք կարող ենք օգտագործել կամ համոզագործել ձեր բժշկական տվյալները բժշկական հետազոտություններ կատարելու նպատակով:

Օրենքին համապատասխանելու նպատակով

- Մենք կհամոզագործենք ձեր տվյալները նաև Առողջապահության և հանրային ծառայությունների վարչության հետ, եթե դա պահանջվում է պետական կամ դաշնային օրենքներով, և եթե այն նպատակ ունի պարզել, թե արդյոք մենք պահպանում ենք գաղտնիության մասին դաշնային օրենքը:

Դատաբժշկական փորձագետի կամ թաղման բյուրոյի աշխատակցի հետ աշխատելու նպատակով

- Մենք կարող ենք բժշկական տվյալները համոզագործել դատաբժշկի, դատաբժշկական փորձագետի կամ թաղման բյուրոյի տնօրենի հետ՝ անձի մահվան դեպքում:

Պատասխանելու աշխատակիցների փոխհատուցման հետ կապված, իրավապահ մարմինների և պետական այլ հարցումներին

- Մենք կարող ենք ձեր բժշկական տվյալներն օգտագործել կամ համոզագործել հետևյալ նպատակներով՝ աշխատողների փոխհատուցման պահանջների համար, իրավապահ նպատակներով կամ իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց, առողջապահական վերահսկողության մարմինների՝ օրենքով թույլատրված գործունեության համար, հատուկ պետական գործառնությունների համար, ինչպիսիք են զինված ուժերը, ազգային անվտանգությունը և նախագահի պաշտպանության ծառայությունը:

Դատական հայցերին և իրավական գործողություններին պատասխանելու նպատակով

- Մենք կարող ենք համոզատործել ձեր բժշկական տվյալները՝ ի պատասխան դատարանի կամ վարչական որոշման, կամ ի պատասխան միջնորդագրի:

Օրենքով մեզանից պահանջվում է ապահովել ձեր պաշտպանված բժշկական տեղեկությունների գաղտնիությունը և անվտանգությունը

- Մենք անհապաղ կտեղեկացնենք ձեզ, եթե խախտում ի հայտ գա, որը կարող է վտանգել ձեր տվյալների գաղտնիությունը կամ անվտանգությունը:
- Մենք չենք օգտագործի կամ համօգտագործի ձեր տվյալներն այլ կերպ, քան նկարագրված է այստեղ, եթե դուք մեզ գրավոր չհայտնեք, որ մենք կարող ենք դա անել: Եթե մեզ հայտնեք, որ մենք կարող ենք, դուք ցանկացած պահի կարող եք փոխել ձեր մտադրությունը: Մտափոխվելու դեպքում մեզ գրավոր տեղեկացրեք այդ մասին:
- Մենք պետք է հետևենք սույն ծանուցման մեջ նկարագրված պարտականություններին և գաղտնիության կանոններին և ձեզ տրամադրենք դրա պատճենը:
- Մենք կարող ենք փոխել այս ծանուցման պայմանները, իսկ նոր ծանուցումը հասանելի կլինի ըստ պահանջի:

Այս ծանուցման մանրամասն պատճենը ստանալու համար կարող եք դիմել հետևյալ հասցեով

- AltaMed Գաղտնիության հարցերով պաշտոնյա
- Կլինիկա, որտեղ բուժօգնություն եք ստացել

Գաղտնիության գործելակերպերի վերաբերյալ ծանուցման ամենաթարմ տարբերակը դիտելու համար այցելեք www.AltaMed.org/regulatory-notice կամ սկանավորեք այս QR կոդը.



Գաղտնիության գործելակերպերի վերաբերյալ ծանուցման ամփոփագիր Ուժի մեջ մտնելու օրը՝ 6/15/23